

Սևծովյան ՀԿ-ների ֆորում 2011



2011թ. հոկտեմբերի 6-8 ընկած ժամանակաշրջանում, Բուխարեստում տեղի է ունեցել ՀԿ-ների 4-րդ Սևծովյան ֆորումը, որը կազմակերպված էր Ռումինիայի Հկ-ների Զարգացման Ֆեդերացիայի կողմից Եվրոպական հանձնաժողովի, Սևծովյան ռեգիոնալ համագործակցության տրեստի և Ռումինիայի արտաքին գործերի նախարարության հետ համատեղ:

ՔՀԶԿ-ի նախագծի մասնակից Նելլի Աջաբյանը մասնակցել է այդ ժողովին: Ֆորումը հավաքել էր ավելի քան 200 կազմակերպություն տարածաշրջանի երկրներից, ինչպես նաև այլ բաժնետերերին ներառյալ Ռումինիան, Մոլդովայի Հանրապետությունը, Ադրբեջանի Հանրապետությունը, Թուրքիայի Հանրապետությունը, Ուկրաինայի Հանրապետությունը, Վրաստանի Հանրապետությունը, Բելգիան, Ֆրանսիան, Բուլղարիան, Չեխիայի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Կիպրոսը, Հայաստանը, Թունիսը, ԱՄՆ-ը, Շվեդիան, Շվեյցարիան:

Ֆորումի նպատակն էր Սևծովյան տարածաշրջանի երկրների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, կառավարությունների եւ ակտիվ ՀԿ-ների միջև երկխոսության, փոխըմբռնման և համագործակցության լայն հնարավորություններ ստեղծել:

Ֆորումի ընթացքում քննարկվել են հետևյալ կարևոր և արդիական թեմաները՝ Սևծովյան տարածաշրջանը 2011թ.-ին, ԵՄ հարևանության քաղաքականությունը և նրա Արևելյան ուղղությունը,, Սևծովյան տարածաշրջանի կարգավիճակը ԵՄ տարածաշրջանային համագործակցությունում, անցում դեպի ժողովրդավարությանը, սոցիալական աջակցության քաղաքականությունը և երեխաների պաշտպանությունը,

սևծովյան տարածաշրջանի ժողովրդավարացումը և ՀԿ - ների դերն այս ոլորտում:

Ֆորումի քննարկումներին մասնակցել են պաշտոնյաներ Ռումինիայից (Տրայան Չեբելեու - BSEC ՄՕՏՀ գլխավոր քարտուղարի տեղակալ, Միհնեա Կոնստանտինեսկու - գլխավոր տնօրեն, ԱԳՆ, Դորու Կոստի- պետքարտուղար, ԱԳՆ), Թուրքիայից (Սուաթ Կինիկլիօղլու - AK կուսակցություն), Ֆրանսիայից, Գերմանիայից:

BSCSIF-ի մասնակցությունը սևծովյան ՀԿ-ների ֆորումին ընդլայնեց ՀԿ-ների հետագա համագործակցության ցանցը՝ Ֆոնդի հետագա ծրագրերի շրջանակում:

Ֆորումի ընթացքում տարբեր երկրներից (Հայաստան, Ադրբեջան, Բուլղարիա, Վրաստան, Հունաստան, Մակեդոնիայի Հանրապետություն, Թուրքիա, Ուկրաինա, Ռուսաստան) շուրջ 200 մասնակիցներ բանավիճեցին ռեգիոնալ հիմնախնդիրները և փորձեցին գտնել լուծումներ տեղական և ռեգիոնալ առկա խնդիրների համար: Ֆորումին մասնակցեցին ՀԿ-ների ներկայացուցիչները, շրջանի էքսպերտներն ու դոնորները, կառավարությունները, սևծովյան շրջանում ակտիվ ԵՄ անդամ այլ պետություններ, դեսպանատներ, զանգվածային լրատվությունը:

Եվրոպայի տնտեսական եւ սոցիալական կոմիտեի նախագահ Սթեֆան Նիլսոնը հրավիրված խոսնակ էր պարոն Դորու Կոստիի՝ Ռումինիայի արտաքին գործերի պետքարտուղարի և Եվրոպական պառլամենտի անդամ պարոն Տրայան Ուրզուրիի հետ միասին: Պարոն Նիլսոնը հաստատեց իր աջակցությունը այս միջոցառմանը և ընդգծեց, որ «Քաղաքացիական հասարակությունը կարող է կառուցել համագործակցություն և ստեղծել ու իրականացնել համատեղ ծրագրեր: Նախորդ երեք տարիների ընթացքում քաղաքացիական հասարակության կողմից անցկացված ծրագրերը սրա փայլուն օրինակներն են, բայց դրանց թիվը պետք է աճի»:

Սևծովյան ՀԿ-ների Ֆորումը հաստատեց Սև ծովի կարևորությունը՝ որպես առանց արգելքների համագործակցության և փոխազդեցության շրջան, և բացահայտեց սևծովյան երկրների միասնական գործունեության հնարավորությունները: Ժողովի քննարկումներին ներկայացված թեմաներից էին կառավարման որակին, ժողովրդավարությանը, տարածաշրջանային համագործակցության մոդելներին առնչվող խնդիրները, ինչպես նաև անցումային շրջանից քաղած գիտելիքները, շրջակա միջավայրին վերաբերող խնդիրները, երեխաների պաշտպանությունը, կրթությունը և լիդերությունը: Ֆորումի նպատակն էր Սևծովյան տարածաշրջանի ՀԿ-ների միջև ընդլայնել

երկխոսությունը և համագործակցությունը՝ տարածաշրջանում ստեղծելով կապեր և համատեղ ծրագրեր: Եվրոպական Հանձնաժողովի Ռումինիայի Ներկայացուցչությունը Սև ծովի ՀԿ փոխգործակցության գերազանցության մրցանակով պարգևատրել է երկու կազմակերպություն՝ ARI շարժումը Թուրքիայից և Գլոբալիզացման և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը Հայաստանից: Այս մրցանակի նպատակն է ընդլայնել Սևծովյան փոխգործակցությունը և նրա դերը տարածաշրջանային, կոոպերատիվ մոտեցման առաջադրումը տարածաշրջանում, ինչպես նաև ԵՄ արտաքին քաղաքականության բազմակողմանի ուղղությունները:

Նելլի Աջաբյան

ՔՀԶԿ –ի ծրագրերի համակարգող